լապէս «Պէպօ», որի որոնալից մնալօզանները սարսափեցնում էին բոլոր հարստահարող դասակարգին, որը լսում էր «Պէպօ»-ի (պ. Աստուածատուր կանկաճանց) խօսքերում իր արդար դատավճիռը, բայց չը գիտէին՝ յիշում էր տաճարում կանգնած մաքսաւորին և նրա խօսքերը «Տէր, ցաւեա ինձ մեղաւորս», բայց միայն թատրոնական ներկայացումներով նշանաւոր չէր անցեալ տարվայ ամռան։ Զբաղմունքների համար որված ներկայացումները ծնան մի այլ աւելի նշանաւոր գործ, այն է հիմնվեցաւ մի «Բարեգործական ընկերութիւն» որի նպատակն է նպաստել չքաւորների կանոնաւոր կերպով և ըստ կարելոյն առաջն առնել մուրացկանութեան։ Ահա յիրաւի մի բարի, մի խելացի գործ։ «Ընկերութեան կանոնագրութիւնը հաստատվեցաւ կառավարութիւնից, և այժմ ընկերութիւնը ունի մօտ 180 անդամ տարեկան տասը բուբլի վճարող։ Առաջիկայ ամռանը պէտք է սկսվի ընկերութեան կանոնաւոր գործունէութիւնը, որին մենք 'ի բոլոր սրտէ կը մաղթենք յաջողութիւն և դարձեալ յաջողութիւն։

Նորայր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 21 յունիսի

Մեր ազգը դիմում է այսօր Եւրոպային և իրան քանիցս անգամ գերազանց համարելով թիւրքերից և քիւրդերից, պահանջում է լուսաւոր և քաղաքակիրթ ազգերի ատանից համակրութիւն, և առաւել քան զայս, մենք պահանջում ենք Եւրոպայից, որ Հայաստանում տիրող և իշխող թիւրքերի ձեռքերից առնեն կառավարութեան դեկը և դնեն հայերի ձեռքին, մեզի վրա ենք հիմնում մենք մեր պահանջները։ Ահա ինչի։ Մենք սուր և ճարտար լեզուով ցոյց ենք տալիս թիւրքերի չատ թերութիւնները և անընդունակութիւնները, և այդ թերութիւնների իբրև զլիաւորը և առաջինը դնում ենք քաղաքակիրթ ազգերի առաջ թիւրքի մահմետական կրօնի մոլի եռանդը, սակայն զորա հետ միանգամայն մենք ներկայացնում ենք այդ ազգերի դատաստանի և անաչառ քննադատութեանը մեր տաճկաբնակ եղբարց աչքատեսութիւնը, հասարակութիւնը, մեծաւոր բարձր զարգացումը և ուրիշ այլ և այլ քրիստոնէական բարեմասնութիւններ։

Մինչէ սխալվում են այս բանն անելով թէ հայոց ազգի զարգացած ներկայացուցիչները, թէ հայոց մէջ իբրև հիւպատոս, դեսպան և այլ քաղաքական պաշտօնեաներ գտնվող անձինք, կամ նոյն իսկ Եւրոպայի քաղաքագէտները, որ տեղեկագրերում, լրագրներում և պարլամենտներում երկարօրէն աշխատում, գրում խօսում են։ Ոչ որ չէ սխալվում այս մեր խեղճ, բայց հարիւրապատիկ անգամ մահմետականներից ամեն կողմնէ գերազանց հայ եղբայրներին ջնաքգովելով. ամենքն էլ գիտեն և համոզված են այդ բանում, որոնք տեսել, կշռել համեմատել են քրիստոնեայ հայերին և մահմետական թիւրքերին և քիւրդերին։

Սակայն ինչպէս մի փորձ թագաւոր (Սողոմոն) ասում է՝ «մեռած ճանճեր զարգացնում են անուշահոտ իւղերը»։ Շատերը եղել են մեր ազգի պատմութեան մէջ և հիմա էլ քիչ չեն նորանց ներկայացուցիչները մեր դարում, որ կամ իրանց անձնական չաները ազգի չաներից վեր դասելով, ուզում են և թոյլ են տալիս, որ հաղթաւոր հայ ընտանիքներ փչանան, տները քարուքանդ լինեն, կանայք ու աղջիկները անպատուեն և Հայաստանը սոսկ, հարստահարութիւնների և բարբարութիւնների ասպարէզ դառնայ, միայն թէ իրանք հանգիստ նստեն իրանց վայելչութեան փառաց ամբոի վրա, մինչդեռ խօսելու և գործելու ժամանակն է, կամ թէ ազգին առաջնորդելու և ճանապարհ ցոյց տալու պատանդվը վերկնչալով ուզում են միամտներին սնդուղի մէջ խորտակել բոլորովին խակ և վնասակար մտքեր քարոզելով։

Քանի անգամ ասվեցաւ և քանի կրկնվեցաւ թէ Եւրոպայի ազգերը միայն այն ցեղերին են քաղաքական իրաւունքներ տալիս արժանի համարում, որոնք դադարել են կրօնի և հաւատի և եկեղեցու պատրուակով կիրք և վայրենութիւն առաջ քշել։ Քանի անգամ է զգուշացնում ենք, թէ մեր մասը Եւրոպայի ատեանում մահմետականութեան փառի կրօնամոլութեան վրա դնելով, մենք մեր մէջ պէտք է ոչնչանենք, որ այդ մոլութեան ամենանշնչին նշանն անգամ չունենանք։ Բայց միթէ մեզանում չեն գտնվում մարդիկ, որ Սերբիայի, Բուլգարիայի, Բոլգարիայի Նորագոյն կիրքի պայմաններին բոլորվին անտեղեակ (որոնք իրաւունաբութիւն ստացան միայն կրօնական ազատութիւն տալով), սկսում են լրագրութեան միջոցով հրապարակով այնպէս խօսել, որ իբր թէ Բերլինի կոնգրէսի միտքը այդ մասին չեն իմացել կամ կարծես թէ տասնմէնիներորդ դարու մեռեալներ են, որ հիմա յարուցվեն են առել և մեզ կրօնական պատանում են խօսում, «մարդ խելէ, «մարդ որսալ և այն և այն զրոյցներ անում։

Կ. Պոլսի «Մասիսը» չատ սխալում է ի զուր ջանալով Ամերիկայի միսիոնարների գործը իբրև վնասակար և իբրև չարիք մեր ազգի համար ներկայացնելու *)։ Դա մի աններելի անգուշութիւն է, որ եթէ չարուենակվի և Եւրոպայի ականջին հասնէ, կարող էր չատ համակրութիւն փչացնել Եւրոպայում մեզ համար։ Բոլոր լուսաւոր աշխարհը հանդված է,որ Ամերիկացի քարոզիչները ոչ միայն Ցանկասասնում հայոց մէջ, այլ Աֆրիկայում, Սիրիայում, Հնդկաստանում, Չինաստանում և աշխարհս ուրիշ չատ տեղերում անգամ բարիքներ են արել։ The ninetunth century մի երեսի Աբգիներին ամսագիր սոյն յունիս ամսվայ գլխում Ցանկասասնում բերենորգութիւններ մոցնելու վրա խօսելով, ասում է թէ, «այն չգեղ օրինակը, որ արաւեց մի հարուստ ամերիկացի, միսիոր Բօբէրա, «Բօբէրտի ճեմարանի» հիմնադիրը, որ Բոսֆորի միջով ճանապարհորդողի համար ամենանշանաւոր առարկաներից մին է։* Մեծ դրգիռ է գցել յոյների և բօլգարների մէջ իրանց ուրդց դասարակելու մեծ գործին նպաստելու։ Սակայն Մասիսը և Նորա արձագանքը անտերների կարճատեսութեամբ մեզ մօտ բաներ են գրում, որոնք բարեզաղարար ազգիս լուրջ խորհող մասի վրա չեն ազդում, բայց, ինչպէս լսում ենք, ժողովրդի սաոր և գռեհկի մասը կարդալով, սկսում է ապատարանականներին պատեղ անելու նեղել։ Ահա անխոհեմ զրվածքի վատ հետևանքը։

Ա. Ամիրխանեանց

*) Մենք չենք պաշտպանում ամերիկացի Գոստարիերի, Բիլմեների անհնական խոշոր կամ փոքր սխալները։ Մենք գիտենք այդ և դատապարտում ենք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԿՈՆԳԵՐԵՆՑԻԱ

—

«Polit. Corresp.» լրագրին Բերլինից, յունիսի 23-ից գրում են հետևեալը։

Դիպերի այժմեան գրութիւնից երևում է, որ կոնֆերենցիան ինքը կը սահմանափակի իր գործունէութեան շրջանը, որոշելով միայն թիւրքյունական սահմանները։ Այժմ կասկածելի է դարձել, թէ արդեօք կոնֆերենցիան ինքը կը փնռի պետութիւնների առաջարկութիւնը թիւրքային հաղորդելու ձևը, թէ այդ հաղորդութիւնից առաջ պետութիւնները իրանց մէջ մի համաձայնութիւն կը կայացնեն։ Այդ դէպքում հարցը սահմանափակվում է սկզբնական հաղորդութեամբ, իսկ հետևանքների զարգացումը կախված կը լինի Բ. Դրան այս կամ այն պատասխանից։ Զարմանաց անհիմն են պետութիւնների մասին տարածված լուրերը, իբր թէ նրանք երբեմն թիւրքային, երբեմն Ցունասանին են պաշտպանում։ Ռուսաստանի մասին ասում են, որ Կ. Պոլսի մէջ նա իրան թիւրքաբէր է ցոյց տալիս, իսկ Աթէնքի մէջ յոյնաբէր։ Այդ բոլորը անհիմն է։ Ինչպէս երևում է Ռուսաստանը հաւանում է չէզոք դիրքի դերը, որից նա հեշտութեամբ չի հրաժարվիլ։ Ֆրանսիան և Անգլիան չափազանց ցանկանում են կոնֆերենցիայի փնռանները մեծ ոյժ տալ, մանաւանդ այդ բանը ցանկանում է Ֆրանսիան, որ օգուտ է քաղում դէպքից որպէս զի եւրոպական գործերի մէջ առաջնակարգ դեր խաղայ։ Իտալիան խոնարհութեամբ հետևում է սրանց եւրոպական պետութիւններին, իսկ Աւստրո-Ունգարիան և Գերմանիան ասիթ չունեն ընդդիմանալ կոնֆերենցիայի փնռաներին, քանի որ նա իրանց կամքով է կազմած։

Փարիզից «Polit. Corresp.» լրագրին յունիսի 22-ից գրում են։ Զանազան պետութիւնների բռնած դիրքերը կոնֆերենցիայի մէջ բաւական հետաքրքիր են։ Օրինակ, Իտալիան, որ առաջ Հանձնում է պարզապէս ոչ սկզբից ընդդէմ էր Ցանինան Ցունասանին գիջելուն, ընդունեց Ֆրանսիայի առաջարկած սահմանական գիծը։ Իտալիայի հայեացքների այդ յանկարծակի փոփոխութեան պատճառները դեռ յայտնի չեն։ Դուցէ նա կարծում է, որ յունաց սահմանների վրա գործը նոյն ուղղութիւնը կը ստանայ, ինչ ուղղութիւն որ ստացաւ Զերնոգորիայի սահմանների վրա, որտեղ պարզապէս ընդդիմանում են Եւրոպայի կամքին։ Զարմանալի է, որ Ռուսաստան էլ բարեկամաբար է վերաբերվում Ցունասանին։ Նա պաշտպանում է այնպիսի սահմանական գիծ, որ Բերլինի դաշնագրի որոշումից աւելի հեռու է գնում։ Աւստրո-Ունգարիան մնանում է Թիւրքայ տեսակէտին, գործում է Բերլինի դաշնագրի համեմատ և համաձայն Գերմանիայի հետ։ Թիւրքաբէրները հաստատվում են, որ կոնֆերենցիան վիճաբանութիւն չի կայացնի, այլ միայն խորհուրդ կը տայ Բ. Դրանը, բայց պէտք չէ ձևին այդպիսի մեծ նշանակութիւն տալ։ Ի հարկէ այս դէպքում միջազգային սովորութիւնները չեն խախտվի, բայց այնուամենայնիւ ներկայում Եւրոպայի խորհուրդները այնպիսի մեծ նշանակութիւն կունենան, որ Կ. Պոլսի մէջ յոյսի համար տեղիք չի մնայ։ Բացի այդ Եւրոպայի առաջ խորհուրդներին կարող են չհետևել եւրոպական գիտուորական ներատորիներ, որոնք թիւրքաց ջրերը կը մտնեն։ Կոնֆերենցիայի վճիռները իրագործելու և նրանց Բ. Դրան հաղորդելու ձևի մասին այժմ խորհրդակցութիւններ չեն լինում։ Հարցը այժմ սահմանական գծի որոշելուն է վերաբերում։ Ամսոյի քաղաքական շրջանները չեն հաւատում այն լուրին, որ Թիւրքիան մասիր է պատերազմական պատասխանութիւններ տեսնել։ Կարծում են, որ սուլթանը չը նայելով նրան տուած խորհուրդներին, չի համաձայնի թեռնոթիներ արձակել եւրոպական նաւերի վրա, եթէ նրանք երևան Դարդանելեան նեղուցի մէջ, կամ Ցունասասանին պաշտպանելու համար։ Այդ բոլորը անհրաժեշտ չէ համարվում։

ԿՈՆԳՐԵՍԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Արտասահմանեան լրագիրները հաղորդում են, որ Ունգարիայի նախին նահանգապետ Վերվիկ Կոչուտ ներկայացել յիշատակարան է կազմում իր գործունէութեան մասին աքսորանքի մէջ և որ այդ յիշատակարանը կը հրատարակվի միաժամանակ ունգարական, գերմանական և անգլիական լեզուներով։ Այժմ արդէն հրատարակված է այդ հետաքրքիր հեղինակութեան առաջին մասը և կրում է «Գրութիւններ իմ աքսորանքի մասին» վերնագրը։ Ունգարիայի ծերունի ազգաբերը (ծնվել է 1802 թ.) վշտացած յիշեցնում է ընթերցողներին, որ ինքը ունգարական քաղաքացու կոչումից զրկված է։ Անցեալ տարվայ վերջերում ունգարական պարլամենտը մի օրէնք ընդունեց, որի զօրութեամբ առանց թոյլատրության արտաքսվամնում տաս տարի ապրող ունգարացին զրկվում է ունգարական քաղաքացու կոչումից, եթէ նա չի վերադառնայ հայրենիք, կամ աստրոՈունգարական հիւպատոսին չի ներկայանայ։ Կոչուտ այդ օրէնքը չէ հասկանում և Ունգարիայի այժմեան գրութիւնը օրինաւոր չը համարելով, յայտնում է, որ ինքն աքսորական կը մնայ։ Յիշատակարանը յատաքան ունի, որ մեկնում է Կոչուտի գործունէութիւնը աքսորանքի մէջ։ Թէպէտ 1849 թուականի ունգարական ապստամբութիւնը չաջողվեցաւ, այնուամենայնիւ Կոչուտ և Գեգը-Ասիա աքսորված միւս ունգարացի ազգասէրները Ունգարիայի գործը անդառնալի կերպով կորած չէին համարում։ Կոչուտ համոզված էր, որ Ունգարիայի անկախութիւնը սերտ կապով կապված էր եւրոպական գաղտնիների և հաւասարակշռութեան շահերի հետ։ Ունգարական ազգասէրների բոլոր գործունէութիւնը այն նպատակին պէտք է ձգտէր, որ ապստամբութեան անպտղ վախճանի պատճառով ազգը չը կորցնէր իր հաւատը դէպի իր սեփական ոյժերը և որ Եւրոպան չը մոռանար ունգարական ազգի իրաւունքի և բնական պահանջները։ Այդ ուղղութեամբ էլ գործում էին աքսորական ազգասէրները։ Նրանք համոզված էին, որ Ունգարիան անկախ լինելու համար անկասկած կաճէր իրաւունքներ ունէր, թէ իր հազար տարիներ տևող պատմութեան պատճառով և թէ դիպլոմատական համաձայնութիւնների հիման վրա։ Այդ պատճառով աքսորական ազգասէրները Կոչուտի առաջնորդութեամբ աշխատում էին, որ Ունգարիան իր արտաքին յարաբերութիւնների մէջ պաշտպանութիւն գտնէր։ Կոչուտ պնդում է, որ աքսորականների գործունէութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ Ունգարիայի սահմանադրական կեանքի վրա։

Երկու տարի շարունակ Կոչուտ աքսորված է կայանորված էր, այնուհետև նա ապրեցաց Անգլիա, իսկ այնուհետև ուղևորվեցաց Ամերիկա։ Թէ Անգլիայում և թէ Ամերիկայում նրան մինչև այն ժամանակ չեղած հաւատարիմամբ ընդունեցին։ Երևում էր, որ անգլիացիք և ամերիկացիք, համակրելով Կոչուտին, համակրում էին և նրա գործին— Ունգարիայի անկախութեանը։ Այդ համակրութիւնն էր պատճառ, որ ունգարացիների դրամների փոխվեցաւ դէպի լաւ։ Եւրոպայի գերեզման գրութեան տեսակէտից ծանօթ, Կոչուտ հմտութեամբ հետևում էր քաղաքական անցքերին և իր հայրենիքի համար բարեպատեհ միջոցի էր սպասում։ Կոչուտի աշխատանքները իր հայրենիքի համար, նրա ունեցած յարաբերութիւնները զանազան պետական մարդկերանց հետ, նրա ազգանուէր գործունէութեան ընթացքը, Կոչուտի ամբողջ կեանքի պատմութիւնն են կազմում։ Տարաբաղդաբար այդ աշխատանքները գործնական օգուտներ չը տուին Կոչուտի հայրենիքին և այդ հանգամանքը չափազանց վշտացնում է ծերունի ազգասէրին։ Համաշխարհային անցքերը բոլորովին այլ ուղղութիւնն տուցան։ Ունգարացիների մասանցքը թէ Դրվիվ, և թէ 1859 և 1866 թուականների պատերազմներին Ունգարիայի համար գործնական հետևանքներ չունեցաւ։ Ռուսաց վերջին պատերազմը Թիւրքերի հետ մանաւանդ նշանաւոր է իր հետևանքների պատճառով։ Կոչուտի կարծիքով այդ պատերազմը սարսափելի ազդեցութիւն կունենայ Եւրոպայի ապագայի վրա։ Կոչուտ յիշեցնում է, որ դեռ Դրվիվի պատերազմի ժամանակ նա պնդում էր, թէ արևելեան հարցը պատերազմով կողմերի համար բարեյաջող հետևանքներ կարող է ունենալ, եթէ նրանք 'ի նկատի կառնեն լիական և ունգարական հարցերը։ Նրա խորհուրդին չը հետևեցին և Ռուսաստանի զօրութիւնը աւելացաւ։ Բ. Դուռը հասկանում էր Կոչուտի նախագծի օգտակարութիւնը և կամենում էր նրան իրագործել, բայց Թիւրքիայի արևմտեան դաշնակիցները, յարգելով Աւստրիային, խանգարեցին Բ. Դրան մտադրությունը և այդպիսով խափանեցին Ունգարիայի բոլոր յոյսերը։ 1859 թուականի պատերազմի ժամանակ ունգարացիները իրրև դաշնակիցներ մեծ յարաբերութիւններ ունեցան Ֆրանսիայի այն ժամանակ հզոր կայսրի հետ, 1867 թուին իտալիան կառավարութեան հետ, իսկ 1866 թուին Պրուսիայի հետ, բայց այդ դէպքերում էլ ունգարացիների յոյսերը զանազան պատճառներով չը կատարվեցան։

Այսպէս էին գործում ունգարացի աքսորական ազգասէրները։ Այդ գործունէութիւնը անցեալին է պատկանում։ Ազգը բոլորովին այլ վիճակ ընդունեց։ Աշխարհի համար այլ ևս չը կայ ունգարական հարց, չը կան և ունգարացի աքսորականներ, բայց այնուամենայնիւ այս վերջինների կեանքը հետաքրքիր է և նրանց գործունէութիւնը նշանաւոր է Ունգարիայի և համաշխարհային պատմութեան համար։

Կոչուտի յիշատակարանի առաջին բաժինը պարունակում է իր մէջ մի պատմական հայեացք մինչև 1859 թուականը և 1859 թուականին պատահած անցքերը։ Հեղինակը նկարագրում է Իտալիայի միութեան համար եղած պատերազմը և նկատում է, որ իտալական հարցը հասունանում էր 33 տարիների ընթացքում և միայն 1848 թուականին յայտնվեցաւ «կեցցէ Իտալիա, դուրս օտարականներին» աղաղակներով։ Եւրոպական քաղաքագէտներից Մետերնիխ միակ էր, որ հասկացաւ իտալական շարժման բուն նշանակութիւնը։ «Այդ գաղտնիքը թիւրիների հարց չէ, պատասխանում էր նա Անգլիայի խորհուրդներին։ Իտալացիները կամենում են ազգութիւն լինել։ Նրանք չեն ուզում որ Իտալիան միայն աշխարհագրական տերմին լինի։» Կոչուտ հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում Վիկտոր Եմմանուէլի և Նապոլէոն III-ի մասին։ Յիշատակարանի առաջին բաժինը վերջանում է 1859 թուականով։ Երկրորդ բաժնի մէջ կը նկարագրվի Կոչուտի գործունէութեան շարունակութիւնը, իսկ երրորդ բաժինը նուիրված կը լինի «Արևելեան հարցին 1854 թուականից մինչև մեր օրերը» և այդ վերնագիրներն էլ կը կրէ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԱԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ Երկկ, յունիսի 24-ին, վախճանվեցաւ Ֆինանսների միներարի օգնական Գիրս։

Կ. ՊՕԼԻՍ, 25 յունիսի։ Բ. Դուռը ընդունեց Արէգդրին-փաշայից կազմած պրօկկար Հայաստանի բէֆորմների մասին։ Պետութիւնների դեսպանները յայտնված է որ արդէն ձեռնարկված է այդ բարենորոգումների իրագործմանը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ